ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք,
ՀՀ, Լոռու մարզ, Գ.Գեղասար, Հեռ. 077799399
geghasar.lori@mta.gov.am

N 93
29 ապրիլ 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Կից ուղարկվում է Գեղասար համայնքի ավագանու թիվ 18-Ա, 19-Ա, 20-Ն, 21-Ա և 22-Ա որոշումները:

Առդիր՝ 6 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վարազդատ Գրիգորյան**

Կատ. Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Մ. Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 077799399, geghasar.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ապրիլի 2019թվականի N 18-Ա

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 25.04.2019ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ 5-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով Գեղասար համայանքի ավագանին որոշում է.

Հաստատել Գեղասար համայնքի 25.04.2019թվականի արտահերթ 5-րդ նիստի օրակարգը.

1.Հայրենական Մեծ Պատերազմի 74-րդ տարելիցի կապակցությամբ գումար հատկացնելու մասին:

2. Գեղասար համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 05-ի <<Գեղասար համայնքի 2019թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 58-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

3. Գեղասար համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

4. Գեղասար համայնքի վարչական սահմանում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ՎԻՆԵԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 077799399, geghasar.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 19-Ա

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ 74-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Գեղասար համայնքի ավագանու 2017թվականի մարտի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 9-Ա որոշումը, Գեղասար համայնքից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակիցներ, Արցախյան ազատամարտիկներ և Աֆղանստանի մասնակից լինելը Գեղասար համայնքի ավագանին որոշում է.

Հայրենական Մեծ Պատերազմի հաղթանակի 74-րդ տարելիցի կապակցությամբ Գեղասար համայնքի 2019թվականի բյուջեի 4269 հոդվածի 01.06.01. ենթախմբից 100.000 /մեկ հարյուր հազար / դրամ գումար հատկացնել ԼՂՀ-ի ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակիցներին, Արցախյան ազատամարտիկներին և Աֆղանստանի մասնակիցներին հուշանվերներ գնելու համար:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 077799399, geghasar.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ապրիլի 2019թվականի N 20-Ն

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 05-Ի <<ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 58-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի Գեղասար համայնքի ավագանին որոշում է.

1.Գեղասար համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 05-ի <<Գեղասար համայնքի 2019թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> թիվ 58-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել փոփոխություններ բյուջեի պահուստային ֆոնդի 4891 հոդվածի 11.01.02. խումբ ենթախմբից 1.200.000 /մեկ միլիոն երկու հարյուր հազար/ դրամ գումար տեղափոխել, որից՝ 1.000.000 /մեկ միլիոն/ դրամ գումարը տեղափոխել 4251 հոդվածի 01.06.01. խումբ ենթախմբին Գեղասար համայնքի <<Ծիսակատարությունների և հանդիսությունների սրահի>> հաստատության կառուցման աշխատանքները կազմակերպելու համար իսկ 200.000/երկու հարյուր հազար/ դրամ գումարը տեղափոխել 4251 հոդվածի 01.01.01. խումբ ենթախմբին Գեղասարի համայնքապետարանի տարածքը բարեկարգելու համար:

2.Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ տասներորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 077799399, geghasar.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ապրիլի 2019թվականի N 21-Ա

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համայնքի ավագանու 2017թվականի մայիսի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 20-Ա որոշմանը համապատասխան , հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապեսանապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկվող հանձնաժողովի եզրակացությունները՝ Գեղասար համայնքի ավագանին որոշում է .

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի :

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Գեղասար համայնքի ավագանու

2019 թվականի ապրիլի 25-ի **N 21-Ա որոշման**

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Խաչատրյան Գեվորգ Վարդանի – տաս հազար դրամ, երեխայի ծննդյան գումար,

ԳԵՂԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 077799399, geghasar.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ապրիլի 2019թվականի N 22-Ա

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01.07.2010թվականի, թիվ 186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը՝ որ կադաստրային քարտեզի և տեղեկագրի համաձայն 06-028-0022-0012 ծածկագրից առանձնացված 0,04661 հա բնակավայրերի տնամերձ և 06-0285-0583-0001 ծածկագրից առանձնացված 0,01225 հա բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողամասերը սխալմամբ համայնքային սեփականության փոխարեն հաշվառվել է անհայտ և որևէ անձի նկատմամբ գույքային իրավունքի գրանցում չի իրականացված Գեղասար համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Ճանաչել Գեղասար համայնքի սեփականության իրավունքը 06-028-0022-0012 ծածկագրից առանձնացված 0,04661 հա բնակավայրերի տնամերձ և 06-028--0583-0001 ծածկագրից առանձնացված 0,01225 հա բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողամասերի նկատմամբ համաձայն հատակագծերի:

2. Համայնքի ղեկավար Վարազդատ Գրիգորյանին՝ դիմել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 06-028-0022-0012 ծածկագրից առանձնացված 0,04661հա բնակավայրերի տնամերձ և 06-028-0583-0001 ծածկագրից առանձնացված 0,1225 հա բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողամասերի նկատմամբ Գեղասար համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու և համայնքային սեփականության իրավունքի վկայական տրամադրելու համար:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ՎՈՒԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ